

12 MAR 2011

ԼՎԻ, Մ.

Հ.Յ.Ս.Տ.Բ.Ա.Ս.Տ.Բ.Ի.Ը.Ը.Տ.Բ.Ը.Ն.Յ.

ՄԱՆԿԱԿԱՆ ԸՆԿԱՆ

Իսկական մեկ արարով.

891.99
S-37

891.99

S-37

Uy.

ՀԱՅԿ ՏԵՐ-ԱՍՏՈՒՆԹԱՏՐԱՆՆԵՑ

ՃԱՆԿԸՍ ԸՆԿԱՐ

402

Վողիկի մէկ արարով.



ԹԻՖԼԻՑ
 «Տպարան ժողովրդագրական»
 1914

Настоящая пьеса подъ загла-
віемъ „Попался ты“ разрѣшена для пред-
ставленія на сценахъ 3 Августа 1914 г.
№ 20821.

Ո՛վ որ ցանկանում է սոյն վորելիլը ներ-
կայացնել բեմի վրայ, պարտաւոր է երեք րուբ-
լի (3 րուբ.) ուղարկել յօգուտ Թիֆլիսի Զու-
բալովի անուան Փողովրդական տան հայերէն
ներկայացումներ կազմակերպող Հայկական
դրամատիկ խմբակցութեան:

Հասցէն. Тифлисъ, Народный домъ имени
Зубалова, Армянской Драматической Секціи

Հեղինակը.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Պօղոս Միամտեան, սնանկ վաճառական	մօտ 56 տ.
2. Սոփօ, Պօղոսի կինը	45 տ.
3. Լիզա, Պօղոսի աղջիկը	20 տ.
4. Օհանէս, նրանց խոհարարը	50 տ.
5. Կիրակոս, տիրացու	40 տ.
6. Բզնունի, ծխական դպրոցի ուսուցիչ	30 տ.
7. Ներսէս Բագրատունի, դերասան	30 տ.
8. Սեդրակ Արախճեան, պոռօտախօս	35 տ.
9. Սաքօ, ամանեղէն քրէհով տուող	50 տ.
10. Դագաղ շինողը	50 տ.
11. Համբալ,	40 տ.
12. Հին շոր ծախողը.	30 տ.
13. Կառապան	35 տ.
14. Բաղդախինչի	40 տ.
15. Լրաքաղ	25 տ.

Գործողութիւնը կատարուած է Թիֆլիսում.

ՃԱՆԿԸՍ ԸՆԿԱՐ

ՏԵՍԻԼ Ա.

(Վարագոյրը բացուած է և Օհանէան արագ, շփոթուած ներս է պրծնում լրագիրը ձեռքին, որոնում թէ ով կայ սէնեակում և շփոթուած կանչում):

ՕՀԱՆԷՍ—Աղջիկ պարոն, օրինորդ, շոտ եկէք, օգնեցէք, շոտ, շոտ, աղէն մեռել է: Վայ, վայ, վայ, (հասար.) տասնըութը ամսուան փողս է պարտ, ով պիտի տայ ինձ, առանց այն էլ լաց էր լինում, որ փող չունի. (նրանց) Աղջիկ պարոն...

(Սոփօն և Լիզան ներս են վազում)

ՍՈՓՕ—Ո՛վ է մեռել ի՞նչ ես գոռում անյ մարդ:

ՕՀԱՆԷՍ—Աղէն է մեռել, աղէն, ըհը (լրագիրը ցոյց տալով) էստեղ է վրած:

ՍՈՓՕ—Օհանէս ծերացել ես, ու խելքդ

կորցրել, սօ, աղէն կողքի սենեակումն է և քնած է:

ՕՀԱՆ.—Սուտա, աղջիկ պարոն, սուտա, չը հաւատաք, այ էս գագէթումը գրած ա որ մեռել է, հիմի ձեզ հաւատամ թէ՞ գագէթին: Կազմակերպութենի մարդիկն ա-սու՛մ են, որ ինչ գագէթում գրում են միալար ըզորթա:

ՍՈՓՕ—Այ մարդ, աղէն շուտով կը վեր կենայ ու կհագնի, ո՞վ է մեռել, ինչեր ես դուրս տալիս:

ՕՀԱՆ.—Պօղոս աղա Միամիտովը, ըհը (մատնացոյց է անում լրագիրը):

ԼԻԶԱ.—(Իուրս է պոկում ձեռքից լրագիրը և արագութեամբ կարդում) Մահագոյժ. Պօղոս աղա Միամտեան: Երէկ երեկոյեան 6 ժամին յանկարծամահ եղաւ Պօղոս Միամտեանը, որ մի բարեպաշտ մարդ էր և երևելի բարեգործ (սկսում է լալ): Հանգուցեալը ծագումով մի հասարակ ջրկիրի որդի էր և մի ժամանակ ձու էր ծախում:

ՍՈՓՕ—(Կէս լաց). Իսկ ինձ հաւատացնում էր, որ իր հայրը շատ Մարսէլ գնալով ոտները մազոլներով էր լցրել:

ԼԻԶԱ.—(շարունակում է) բայց վերջերս հարստանալով փոխեց իր արհեստը և Մար-

քսիզմի ազդեցութեամբ սօցիալիստների շարքը մտաւ:

ՕՀԱՆ.—(Հասար.) Յօցիալ է եղել:

ԼԻԶԱ.—(շարունակելով). Ծնուել է 1832 թ. ոչ մի տեղ չի սովորել:

ՍՈՓՕ—էդ հօ իմ հերիցն էլ մեծ է եղել, բա ասում էր թէ Ներսիսեան զպրօ-ցումն է սովորել:

ԼԻԶԱ.—(Շարունակելով). Բայց որպէս գրականասէր մարդ նրան կտեսնէիք կու-բում, սև կամ կանաչ սեղանի մօտ նստած, որտեղ և համարեան, ամեն գիշեր լուսացնում էր թղթախաղի մէջ: Մի պակասու-թիւն միայն ունէր, որ և նրա կեանքին վերջ տուեց, այն է Կախեթու ձերմակ գի-նին, որից հանգուցեալը չկարողացաւ հրա-ժարուել և երէկ հարբած տուն վերադառ-նալիս զքօսարանի մօտ վայր ընկաւ, ոտը կոտրեց և յանկարծամահ եղաւ. (բոլորե-քեան լալիս են). թաղումը ինչպէս լսեցինք տեղի կուռնեայ կիրակի օրը: Հանգուցեալը թողել է մօտ կէս միլիոն կարողութիւն (Օհանէսը աչքերը չռած մօտենում է լրագրին.)

ՍՈՓՕ—Ինչքան... Ինչքան...

ԼԻԶԱ.—Մօտ կէս միլիոն կարողութիւն և

ՍՈՓՕ—Ըհը—ըհը...

ԼԻԶԱ.—Անթիւ որբեր. լսեցինք, որ

նաև հանգուցեալի կինը՝ Սոփօն իր ամուսնու յիշատակը յաւերժացնելու համար ուզում է զգալի կտակներ անել: Հանգիստ բարեպաշտ գործչին:

ՍՈՓՕ.— Ես կտակներ պիտի անեմ:

ՕՀԱՆ.— (Կիսալաց) Հա, բաս, աղջիկ պարոն, աղէն մեռել է տանու մեծը դուքէք:

ՍՈՓ.— Լաւ, կտակները ճրտեղից պիտի անեմ:

ՕՀԱՆ.— Աղջիկ պարոն, հիմա զրա ժամանակը չէ, թաղման պատրաստութիւն պիտի տեսնէք, ի՞նչ անենք, Աստծու կամքն է, մինչև կիրակի զեռ երեք օր ունենք:

ԼԻԶԱ.— Ա՛յ, մարդ ի՞նչ ես զժուել, հայրիկը կենդանի է:

ՕՀԱՆ.— (Բարկացած ու ձեռքերը թափահարելով) որ կենդանի է միք թաղիլ (դուրս է գնում):

Տ Ե Ս Ի Լ Բ.

ՍՈՓ.— (Լալով) Էս ինչ կրակ է Տէր Աստուած, ախր մարդս երէկ երեկոյեան եկաւ պառկեց: Զլինի՞ թէ ուրիշ մարդ եկաւ. Լիզա, մի գնա սենեակը, տես նրան:

ԼԻԶԱ.— (Լալ.) Չեմ կարող մայրիկ, ես մեռելներից վախենում եմ:

ՍՈՓՕ.— Կա՛վալէրներից հօ չե՞ս վախե-

նում, (արագութեամբ մօտենում է սենեակի դռներին): Պօղոս, Պօղոս, այ մարդ, Պօղոս... ձայն չէ հանում, Պօղոս, Պօղոս... (Լսում է դրսից Պօղոսի բարձր ձայնը) (Հայ հայ, ի՞նչ եղաւ, կոտորուեցաք). Դուրս արի, շուտ, դուրս արի:

ԼԻԶԱ.— Մայրիկ ես գնամ:

ՍՈՓՕ.— Սպասիր ո՛ւր պիտի գնաս:

ՊՕՂՈՍ.— (Գիշերային խալաթով արագ դուրս է գալիս զարմացած)... Ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեց, ի՞նչ էք հարայ տալիս, էլ չէք թողնիլ որ մարդը միքիչ քնի՞:

ՍՈՓ.— Հարայ, քեզ ու Աստծու կրակ սիրտներս շուռ տուիր. այ, գազէթը կարգաւ գրել են, որ դու մեռել ես ու կէս միլիոն կարողութիւն ես թողել:

ՊՕՂՈՍ.— Ի՞նչ ի՞նչ...

ՍՈՓ.— Անթիւ որբեր ես թողել...

ՊՕՂ.— Եե՞՞ք

ՍՈՓ.— Հայ, հա, հրամանքդ: Հարբում ես համ, ոտդ էլ հօ կոտրել ես...

ՊՕՂ.— Ո՛վ, եե՞՞ք:

ՍՈՓՕ.— Այո, հրամանքդ, մի անցիր տեսնեմ ո՞նց ես ման գալիս... այ շուռ գայ սիրտդ, ո՞նց որ իմ սիրտը շուռ տուիր:

ՊՕՂ.— (Զայրացած ու զարմացած ետ ու առաջ է գնում) Ա՛յ կնիկ, զժուել ես, ի՞նչ է:

ՍՈՓ.— Դու ես գժուել դու, գնահ սե-
նեակդ, աղջիկս մեռելներից վախենում է.
գնա որբերիդ մօտ: Այ գետին գնեմ գլուխդ
սիրեկաններ ես պահում հա՛, լաւ, ես քո
աչքերը մէկ-մէկ կը հանեմ:

ՊՕՂ.— Ո՛ւմ աչքերը, այ կնիկ:

ՍՈՓ.— Քո աչքերը, քո, որ մարդ տա-
լու աղջիկդ տանը նստած կարողութիւնդ
ուրիշներին են կտակել:

ՊՕՂ.— Արի ու սրա հետ խօսիր:

ՍՈՓ.— Ինչի՛ լայադ կանես ինձ հետ
խօսել, ով գիտէ գուրսը երեսուն սիրեկան
ունես:

ՊՕՂ.— Ո՛վ

ՍՈՓ.— Դու:

ՊՕՂ.— Այ կնիկ...

ՍՈՓ.— Այ կնիկ քեզ ու զահրումար:

ՊՕՂ.— Այ կնիկ մեռնողը ես չեմ:

ՍՈՓ.— Սուտ ես խօսում, որ մեռնես
մեռել ես:

ԼԻԶՍ.— Ահա լրագիրը:

ՊՕՂ.— (Չայրացած) Չէ, չէ, սրանք եր-
կուան էլ ոնց որ տեսնում եմ, գժուել են,
պէտք է ճարը տեսնեմ (Սոփօին) կնիկս...

ՍՈՓ.— Ես մեռելի կնիկը չեմ:

ՊՕՂ.— Սրանք հանաք չեն անում, չէ,
եւ սրանց ճաշը պիտի եփեմ, թէ չէ էլ

համբերութիւնս բողազիցս քիթս անցաւ
(անկիւնից շտապով վերցնում է ձեռնափայտը
և վրայ ընկնում, Սոփօն մի դռնից, Լիզան
միւս դռնից փախչում են և Լիզան վայր է
գցում թերթը). Ես ձեզ ցոյց կտամ թէ ինչ-
պէս պիտի մասխարա գցել հին սովորազար
Պօղոս աղա Միամտեանին:

Յ Ե Ս Ի Լ Գ.

ՊՕՂՈՍ — (Միայնակ, յոգնած, բարկացած)
էսպէս էլ բան կըլինի՞, ես էստեղ, իրենց
աչքի առաջ կենդանի կանգնած եմ և ինձ
ասում են մեռել ես. էհ, ինչ կայ զարմա-
նալու կամ բարկանալու, կնիկս հին սար-
սաղ է, երևի աղջկանս էլ գժուեցրել է:
Բայց ո՛չ, սա հանաք չէ (տեսնում է լրագիրը)
մէկ վերցնեմ տեսնեմ ի՞նչ է գրած, (վերց-
նում է և երկար որոնելուց յետոյ կարդում է)-
Քհր, տես է, պահ, պահ պահ, (կարդում է
և զայրանում). Տեսնում էք, սրա անունը
լրագիր է... էլ բողկ ծախող, էլ կէկչի, էլ
կօշկակար, էլ մլթօ, էլ ջուլօ չմնաց որ
խմբագիր չըղառնար: Մի ժամանակ ժողո-
վարանի անգամ գրուելիս 300 մարդու
ոտը պիտի պաշէիր, որ չը սևացնէին,
բայց այժմ... այժմ ուրիշ բան է, գնահ,
մի երկու մարկա կպցրու մի թաբաղա

Թղթի վրայ, խնդիր տուր և երկու ամսից
 յետոյ համ խմբագիր ես, համ հրատարա-
 կիչ, թէկուզ այբուբենն անգամ չըզդիտե-
 նաս. և եթէ բան է, ո՞վ գիտէ, ժողովարանի
 անդամ կուզես գրուել, խնդիր տուր, տակը
 ձեռք քաշելիս մի մոռանար գրել որ խմբ-
 ագիր ես, կասեն, Պաւել Գանդուրիչ սե-
 շար չգցես, խմբագիր մարդ է, աշխարհքին
 խելք, է սովբեցնում... Ասացէք խնդրեմ,
 խելքից բորիկը ի՞նչ խելք կարող է սովբեց-
 նել... Մի ժամանակ հայոց ազգը խմբա-
 գիրներ ունէր, որ կասէիր «բարաքալլահ»,
 իսկ այժմ... այժմ ուրիշ բան է, անա ձեզ
 մի խմբագիր, որ արար աշխարհին խաբում
 է թէ ինքը սօցիալիստ է, որ աշխարհում
 մի օր հաւասարութիւն պիտի լինի, որ
 մարդիկ պիտի ապրին միատեսակ, ինչ ես
 ուտեմ, էն էլ դուք, որ աղան ու ծառան
 իրար ընկեր պիտի կանչեն, որ... Թնւն ձեզ
 մարդ ասողին ինչ ասեմ... որ դուրս գան
 էսպիսի հագօներ ու ինձ պատուաւոր բա-
 ղաբացուն ցեխը կոխեն ու հանեն: Եւ այս-
 պիտի մեծ մեծ քարոզներ կարգացող խմբ-
 ագիրը ինքն արդէն կատարում է այդ
 օրէնքները, երեսուն սիրեկան է պահում,
 կօմանա չէ բա ինչ զահրումար է. գիշեր
 ցերեկ կարտ է խաղում, բայց երբ թերթի

մէջ կարտօծնիկի մասին գրեն, խրատներ
 է, որ կարդում է: Մախլան, բեզարեցանք
 էլ իլաջ չկայ: Էն, էն, էն, էն Մարքս որ
 կայ է թէ մի օր ձեռքս ընկէր, ձեր արևը,
 մենակ վզիցը հօ չէ, մէջքից էլ կը խեղդէի,
 որ հասկանար թէ ինչ լպտածութիւններ
 է քարոզել ու էսքան մարդկանց խելքիցը
 հանել... Մի տղայ ունիմ գիշեր-ցերեկ
 տուն չի գալիս. էս օր ժողով ունի, էգուց
 միտինգ, էլօր նիստ, մէկէլ օր մասնաժո-
 դով, յանձնաժողով, էս ժողով, էն ժողով...
 բլբլ, ձեր քօքը կտրուի, որ ամեն միջիմարի
 ընտրում էք: Մի մի մարդ ասող լինի,
 ախր իմ որդին ինչ է հասկանում, որ ըն-
 տրում էք է. էհ, հանեցին մեր հողին էլի,
 ինչ ուզում են էն են անում, մեր գլխի
 աղէն էլ նրանք են, մեր փորի բէվիզօր էլ
 նրանք, կուզեն գործադուլ կանեն, կուզեն
 նրանք, էլ զորն ասեմ: Չէ, չէ բաւա-
 դասադուլ, էլ զորն ասեմ: Չէ, չէ բաւա-
 կան է, պէտք է միջոցներ ձեռք առնել,
 ես ցոյց կտամ մեր պարոն խմբագրին, թէ
 Մետեխում ինչպէս են գրում (դուրը ծե-
 ծում են): Ներս մտիւր, ո՞վ է...:

ՏԵՍՈՒ Գ.

ԿԻՐՍԿՈՍ — (Ներս մանելով և խորը գուլի
 տալով). Ողջոյն ընդ ձեզ:

ՊՕՂՈՍ—Բարի եկար, ի՞նչ կայ:

ԿԻՐ.— Էհ, Աստուած մխիթարեսցէ, Սողոմոն իմաստունն ասել է, «Մեռաւ արդարն և եթող զՂումն յոյժ» այս կեանքս անցաւոր է: Իմացայ որ իմ բարեկամ Պօղոս աղէն մեռել է, եկայ որ...:

ՊՕՂ.— Տօ, դու էլ կնիկս դառար...

ԿԻՐ.— Որ խմբովս պատիւ տամ, զի հող էր և ի հող դարձցի: Ափսոս, ափսոս... ի՞նչ լաւ մարդ էր.

ՊՕՂ.— (հասար.) Մտիկ տուէք էս անիծածին է... Բայց ո՛չ, արի լսեմ ի՞նչ է ասելու:

ԿԻՐ.— Աստուած զհոգին լուսաւորեսցէ, ամեն անգամ եկեղեցուց դուրս գալիս լիուլի վարձատրում էր ինձ:

ՊՕՂ.— (հասար.) Կեանքումս առաջին անգամ եմ տեսնում:

ԿԻՐ.— Քանի անգամ հանգուցեալն ինձ իր տունն էր հրաւիրում, բայց ես չէի համարձակում, «զի չիք անդ տեղի անարժանիս»: Ափսոս, որ այդքան մարդասէր ու լաւ մարդը մեռաւ, (սուտ լալիս է):

ՊՕՂՈՍ— (հասար.) Աներեսութեանը մըտիկ տուէք. չէ, եթէ ես սրան լաւ դաս չտամ, բանի նման չի վիճիլ. (նրան) անունդ ի՞նչ է, ի՞նչ գործի ես:

ԿԻՐ.— (Ուրախ) Կիրակոս, ձեր թաղի տիրացուաց խմբի խմբապետն եմ:

ՊՕՂ.— Ի՞նչ տանք որ խորը թաղես:

ԿԻՐ.— Էհ, Աստուած այս տունս հաստատ պահեսցէ, 25 մանէթ տուէք:

ՊՕՂ.— (Հասար.) Մտիկ տուէք սրան, ոնց մեծերիցն է սկսում. (Կիրակոսին) 5 մանէթ տամ:

ԿԻՐ.— Էհ, աղաջան, կէս միլիոն կարողութիւն է թողել ու...

ՊՕՂ.— Էդ ո՞ր բանկումը:

ԿԻՐ.— Լաւ աղաջան 20 մանէթ տուէք:

ՊՕՂ.— Դու ինձ էն ասա 5 մանէթով չէս թաղիլ:

ԿԻՐ.— Աղա 15 մանէթ...

ՊՕՂ.— Չէ, 5 մանէթ աւել չեմ տայ:

ԿԻՐ.— Չեր լաւ խաթեր համար 10 մանէթ, թէ չէ գնում եմ:

ՊՕՂ.— Հօրդ ողորմի թէ որ գնաս դարդից կը մեռնեմ: Հինգ մանէթ տալիս եմ, էլ ի՞նչ ես ուզում:

ԿԻՐ.— Լաւ աղաջան 7 մանէթ (հասար.)

Ի՞նչ զայմ մարդ է եղել էս անիծածը:

ՊՕՂ.— 5 մանէթ:

ԿԻՐ.— Լաւ, բէհը տուէք:

ՊՕՂՈՍ— Բե՛հը... այ բեհը (վերցնում է ձեռնափայտը և ընկնում Կիրակոսի վրայ. Կի-

առաջին երեսի վրայ պիտի նկարեմ պիտի
 խմբագրին էջի կերպարանքով... Նախ կեր-
 թամ իր մօտ և լաւ մերսելուց յետոյ դա-
 տարան պիտի քաշ տամ, որ նա ցոյց տայ
 ինձ իմ կէս միլիոն կարողութեանս տեղը:
 Այ ձեզ բան, ես քաղցած դիրտով եմ,
 իսկ նա ինձ միլիոնատէր է շինել. եղած չե-
 դածս թագցրած տասնազարն է, որի սո-
 կոսներով մի կերպ քաշ եմ տալիս... անի-
 ծած խմբագիր... բայց գիտէ՞ք միտքն ինչ
 է. քաղաքը լցուած է շանտաժիշտներով,
 կը կարգան, կիմանան որ մեռած չեմ, կը
 կարծեն թէ շատ փող ունեմ ու հազարներ
 է որ կը պահանջեն, գնահատուող Պաւել Դանդու-
 րիչ ու հաւատացրու որ ոչինչ չունես և
 հալբաթ վերջը կը խփեն կսպանեն ու խրմ-
 բագրի փորը կը կշտանայ: Քանդուէր էն
 օրը երբ էզ անամօթներն երևացին. (զուր
 ծեծում են) Օհօ, հալա մնացել են (զուր
 ծեծում են) ո՞վ ես, ի՞նչ ես ուզում:

ԲՁՆՈՒՆԻ— (զրսից) Բացարէք խնդրեմ,
 կարևոր յանձնարարութեամբ եմ եկել:

ՊՕՂ.— Որ սատկես, չեմ բաց անի:

ԲՁՆ.— (զրսից) Բացարէք խնդրեմ, ու-
 սուցիչ Բզնունին եմ, կարևոր գործ ունեմ:

ՊՕՂ.— Ո՛չ, ո՛չ, Պօղոսը կենդանի է հաս-
 կացար:

ՊՕՂ.— Եղբայր, իմ տունս է, չեմ բաց
 անում:

ԲՁՆ.— Պարոն ես հոգաբարձութեան
 կողմից եմ եկել:

ՊՕՂ.— Գնահոգաբարձութեանն ասա,
 որ Պօղոս աղա Միամտովը կենդանի է,
 հալա չի մեռել և մեռնելու ցանկութիւն է
 չունի և մինչև որ ձեզ բոլորիդ մէկ մէկ չը
 թաղէ չի մեռնիլ:

ԲՁՆ.— (բարձր) Բաց արէք թէ չէ դուռը
 կը կոտրեմ:

ՊՕՂ.— (հասար.) Էսպէս էլ աներեսու-
 թիւն, (նրան) չեմ բաց անում:

ԲՁՆ.— (զուր շարժելով) Ահա, կոտրում
 եմ...

ՊՕՂ.— (հասար.) Չէ, սրան էլ պիտի
 խրատեմ, թէ չէ էլի կը գայ (բաց է անում):

ԲՁՆ.— (ներս գալով) Օրը ցերեկով ի՞նչ
 էք զոները փակում, երևի ես ժամանակին
 չեկա՞յ:

ՊՕՂ.— (երեսը շուռ տալով) Ասածու բա-
 րին, հա, ուշացար, է՛, ի՞նչ խաբար, ինչո՞ւ
 ես մեր դուռը կոտրում:

ԲՁՆ.— (հասար.) Երևի սա տանու մարդ-
 կանցիցն է, է՛հ, միևնոյն է ես սրան կը
 յայտնեմ ցաւակցութիւնները (Պօղոսին):
 Հայոց դպրոցի հոգաբարձութիւնը լսելով

Պօղոս աղայի անժամանակ մահը, արտա-
կարգ նիստ գումարեց, յոտնկայս յարգեց
նրա յիշատակը և որոշեց ցաւ յայտնել
որբացած ընտանիքին և այդ պարտաւորե-
ցրեց անել ինձ:

ՊՕՂ.—Պրծանար... շատ լաւ, դէ հիմա
երեսդ շուռ տուր, գնա և ասա քո հոգաբար-
ձուներին, որ ես՝ Պօղոս աղա Միամիտովս
երէկ մեռայ և էսօր յարութիւն առայ:
ԲԶՆ.—(ետ ետ քաշուելով). Իիիինչ ասա-
ցիք դու... դուք էք...

ՊՕՂ.—Ես եմ, ես, հասկացար:

ԲԶՆ.—(կակազելով), Ներեցէք չգիտէի
(փախչելու փորձ է անում. հասար.) յանկարծ
չյարձակուի վրաս, թէ չէ ասում են, որ
մեռելը յարութիւնից յետոյ խեղդել գիտէ...
ախ երանի մի կերպ դուրս գնամ... ծանօթս
է գալիս երկու երեք անգամ տեսել եմ,
նա է, նա է, Պօղոսն է.

ՊՕՂ.—Փախչելու մի պատրաստուիր,
սպասիր...

ԲԶՆ.—(կակազ.) Ես մեղաւոր չեմ, Աս-
տուած է վկայ ես մեղաւոր չեմ, ուղար-
կեցին որ մի բան կտակես (փախչում է):

ՊՕՂ.—(ետեից) Սպասիր, սպասիր, կըտա-
կեմ (դրան մօտ նա դիպչում է Սեդրակին ու
վայր ընկնում):

Տ Ե Ս Ի Լ Է.

ՍԵՆՐԱԿ.—(Բարկացած.) Չե՞ս կարմրեր,
հոնտեղ ննջեցեալ կը հանգչի, հոս աղմուկ
կընես անպատկառ:

ՊՕՂ.—(հասար.) Էս կռօն որտեղից ներս
պրծաւ, որ հալա ուշուկն էլ է տալիս,
(Սեդրակին) ի՞նչ ես ուզում:

ՍԵՆՐԱԿ.—(հասար.) Ասիկայ ծառան կե-
րևի, (Պօղոսին) հանգուցեալ Պօղոսի տունն
աս է:

ՊՕՂ.—(Երեսը շուռ տալով) Ո՛չ, սա սաղ-
մալամաթ Պօղոսի տունն է, դու էն ասան,
ի՞նչ ես ուզում:

ՍԵՆՐ.—(Բարկացած հետզհետէ մօտենալով
Պօղոսին, իսկ Պօղոսը ետ ետ քաշուելով) Ծօ,
ադ ինչպէս կը համարձակիս ազանկ կո-
պիտ պատասխաններ տալ էֆէնդիի մը, որ
ամիրաներու ցեղէն առաջ եկած է, ազգա-
յին մը, գործիչ մը, ատենաբան մը, ճար-
տասան մը, որու առաջ բոլոր աշխարհ կը
խոնարհի, սա փայտին համը կուզես տես-
նալ անպատկառ...

ՊՕՂ.—(բարկացած) Էդ ումն ես ուշուկն
տալիս, հօ չես ուզում սաղ տեղդ ականջը
մնայ, ոչ Մամիրանից եմ վախենում, ոչ էլ
Ղարամանից (հասար.). սա մենձերից է ու-
նեցել, ձեր արևը ասածներից մի խօսք էլա

չհասկացայ, կարելի է օրհնում է, ով գիտէ:
ՍԵՆԻ.— Լեզուդ քեզ քաշէ անպատկառ,
գնա տիկնոջ ըսէ, որ երբեմն ազգային
երեսփոխան Սեդրակ էֆէնդի Արախճեան
եկած է զանի մխիթարելու:

ՊՕՂ.— Օհօ, ամենքն եկան, հիմի երէց-
փոխն է եկել. (Սեդրակին) Տօ, ինչեր ես
դուրս տալիս, ես կենդանի ու դու իմ կնոջ
մխիթարմնք պիտի կարդաս:

ՍԵՆԻ.— (մօտենալով բարկացած) Ի՞նչ ըսիր
քեզի Պօղոս աղայի հէտ կը դասես, (սկսում
է ձեռնափայտով ծեծել):

ՊՕՂ.— (վագելով Սեդրակն էլ ետևից), Վայ,
վայ, վայ, աղբէր ի՞նչ ես ուզում, ջհան-
դամ քո գլուխը, էդ դու, էդ էլ կինս, գնա
ինչ ուզում ես էն ասա:

ՍԵՆԻ.— Քեզի կսեմ, չէ՞ս հասկնար, գնա
տիկնոջ ըսէ, որ Սեդրակ էֆէնդին եկած է:

ՊՕՂ.— (քաղցրութեամբ) Պարոն, հրաման-
քիդ անուներ Սեդրակ է:

ՍԵՆԻ.— Այո՛, ի՞նչ կուզես ըսել:

ՊՕՂ.— Իմ անունն է Պօղոս աղա Միա-
միտով:

ՍԵՆԻ.— (զարմացած և հասար.) Ի՞նչ կըսէ
սա մարդը:

ՊՕՂ.— Եւ ես անա կենդանի կանգնած
եմ հրամաննոցդ առաջ, սուտ է .. երէկ մե-
ռնայ և այսօր յարուժիւն առայ:

ՍԵՆԻ.— (վախեցած) Աս ի՞նչ կըսէ սա
մարդը (մեղմ ետ ետ քաշուելով) ներեցէք
պարոն Պօղոս... (հասար.) ասանկ այ բան
բնաւ տեսած չէի, երթամ... (Պօղոսին) Ը...
Ը... Ը... ներեցէք, գործի կերթամ (դուրս է
փախչում):

Տ Ե Ս Ի Լ Ը.

ՍԱՔՕ.— (Արագ արագ ներս գալով), Աբա՛,
վուրդի է աղջիկ պարոնը:

ՊՕՂ.— Ո՛ր աղջիկ պարոնը:

ՍԱՔՕ.— Պաւէլ Դանդուրիչի կնիկը:

ՊՕՂ.— Ի՞նչ ես կամենում:

ՍԱՔՕ.— Էդ ՚իս գիղիմ:

ՊՕՂ.— Էս տան մեծն էլ ես եմ, պարոնն
էլ ու աղջիկ պարոնն էլ:

ՍԱՔ.— Բաս վուր դուն իս, մէ ջափա
քաշի իմացի հոգէհացի համա:

ՊՕՂ.— Ո՛ր հացի համար:

ՍԱՔ.— Հոգեհացի-քելեխի համար ինչ-
զադամ պրիբոր ի հարկավուր:

ՊՕՂ.— (հասար.) Էլ հնար չկայ, պիտի
ստով ճանապարհ գցեմ. (նրան) արդէն վար-
ձել ենք:

ՍԱՔ.— Պարուն ջան սուտ իս խօսում,
էս քաղկումը վից պաստավչիկ ինք, մէկը
իս իմ, մէկը Պաճօ Սօլօմանը, վրայ երկուսը

Հօթի բէժանը, Չաթանի տղայ Կակուլին,
էս հօ չուրս, իժում Հացափուրինց Կօստօն
ու մէկ էլ Նալչագարէնց Պապուչը: Էս մար-
թիբը այ, դօան մօտ կաղնած ին ու սին-
գիկատինք արի, վուր ձիր քէլէխը մէտի
վիկալնինք:

ՊՕՂ.—Մեր մեռելին առանց քելեխի
ենք թաղում:

ՍԱՔ.—Հն, էդ ուրիշ բանի, համա վուր
սրտով էլ ուզիս, էլ ՚իս դաւի չունեմ: Խուս-
կը մէկ կօնինք ու իժում... էհ, մնաս բարով:
(դուրս է գնում):

ՊՕՂ.—Գնաս բարով (դուռը ետ է գնում)
Ահա ձեզ մարդ, եկաւ, խօսեց, հասկացաւ
ու գնաց, առաջին եկողները խիստ աներես
մարդիկ էին, իսկ սա մարդ էր մարդ, խօ-
սեց մարդավարի, իմացաւ որ քելեխ չու-
նենք ու գնաց: Ափսոս թիֆլիզ, ափսոս,
ինչո՞ւ էլի էսպէս լաւ մարդկանց ձեռին
չես, որ...

Տ Ե Ս Ի Լ Թ.

ԴԵՐԱՍԱՆ.—(Խօսքը կտրելով շտապ-շտապ
ներս է վազում) Ասացէք խնդրեմ, տիկին
Միամտեանին կարելի է՞ տեսնել թէ ոչ:
ՊՕՂ.—(Կտրական) Ո՛չ:

ԴԵՐԱՍ.— Բայց երբ կարելի է տեսնել:

ՊՕՂ.—Ո՛չ մի ժամանակ:

ԴԵՐ.—Պարոն, խնդրեմ պատասխանէք
ինչպէս հարկն է:

ՊՕՂ.—Ես ինչպէս հարկն է էնպէս եմ
խօսում, իսկ հրամանքդ անկարգ:

ԴԵՐ.—Ներեցէք պարոն, դուք ինձ չը
հասկացաք:

ՊՕՂ.—Ո՛չ, շատ լաւ հասկացայ: Մի անս
տեսնեմ ի՞նչ գործ ունէք դուք կնոջս հետ:

ԴԵՐ.—Տեսնում էք որ ինձ չհասկացաք,
ես ուզում եմ տեսնել Պօղոս Միամտեանի
կնոջը և կամ նրա որդիներին մէկնումէկին:

ՊՕՂ.—Ես եմ որդին, ի՞նչ ես կամենում:

ԴԵՐ.—Ըբբ... Ներեցէք, գուցէ ես քիչ
անբաղաբավարի գտնուեցայ... ըբբ... Հայ-
կական դերասանական Դրամատիկ ընկե-
րութիւնը ողբալով իր բարերար Պօղոս աղա
Միամտեանի անժամանակ մահը, ինձ
յանձնարարեց մի փոքրիկ միսիթարանք
կարդալ ձերդ մեծապատուութեանը, որ...
ըբբ... բարեգործութեամբ ձեր հանգուցեալ
հօրից չէք տարբերւում... և խնդրեցին որ
ցուցակը կազմելիս չը մոռանաք փոքրիկ
գումարով գոնէ մասամբ ապահովել մեր
ընկերութեան ներկայացուցները, որովհե-
տե հասարակութիւնն օտարամոլութեամբ

սեփականը մոռացել է, այդպիսով... դուք մեզ քաջալերած կըլինէք, իսկ մենք էլ կը գործենք յօգուտ ապերախտ ազգի, գուցէ կարողանանք արթնացնել նրա խղճի խայթոցը:

ՊՕՂ.—Շնտ լաւ էք անում, գնացէք գործեցէք յօգուտ ազգի էլ, եկեղեցու էլ, ես ձեզ չեմ խանգարում:

ԴԵՐ.—Ըրբ... Ներեցէք, կուզէինք որ քաջալերէիք մեզ:

ՊՕՂ.—Եւ քաջալերում եմ և գովում եմ, կեցցէք, լաւ բան էք անում:

ԴԵՐ.—Ո՛չ, պարոն... ըրբ... կուզէինք որ դուք ի յիշատակ ձեր հանգուցեալ հօրը մի փոքրիկ գումար կտակէիք:

ՊՕՂ.—Է՛հ դու էլ բան ասացիր էլի, հայրս Ներսէս կաթողիկոսի օրով է մեռել, ով զիտէ հիմա ոսկորներն անգամ չեն մնացել ու ուզում ես, որ հիմա կտակներ անեմ:

ԴԵՐ.—(գարմացած) Բայց չէ՞ որ լրագրում գրուած է, որ երէկ է մեռել:

ՊՕՂ.—Գլուխը քարին է տուել և երեսն էլ պատին յիմար խմբագիրը: Տօ՛, ի՛նչ էք ուզում ինձանից, մտադրուել էք ծաղրել ինձ. ի՛նչ էք երուսազէմի աղքատների պէս դռնէ դուռ ընկել, կտակներ ունէք ինձ համար արէք... Պօղոս աղա Միամտովը ես եմ:

ԴԵՐ.—Բայց այդ ի՛նչպէս պատահեց...

ՊՕՂ.—Եւ վաղուանից յարգելի դերասանական ընկերութեանը խնդիր եմ տալիս, որ ինձ համար մի ներկայացում տան, շալուարս մաշուել է և փող էլ չունեմ:

ԴԵՐ.—(Կեղծաւորելով և վախեցած ետ ետ քաշուելով) Ըրբ... ցտեսութիւն պարոն Պօղոս...

ՊՕՂ.—Սպասիր, սպասիր, ի՛նչ ես շտապում մի կտակ շինենք է՛:

ԴԵՐ.—Ո՛չ, ո՛չ, ինքդ կտակ շինիր, ես շնորհակալ եմ... (արագ դուրս է գնում):

Տ Ե Ս Ի Լ Փ .

ՊՕՂ.—Պահ, պահ, պահ բոլորն եկան, երանի մարդ մնաց թէ՞ ոչ. անտանելի դրութիւն է: Ամբողջ կարողութիւնս թղթախաղում տանել տուի, երբէք մարդուն վիրաւորանք չեմ հասցրել, իսկ անամօթ խմբագիրը, հասարակական այդ զիբիլը տես ինչ ի՛նչ խաղեր է խաղում գլխիս: Փողապաշտ դար, ասում էր ողորմած հոգի Պետրոս Միմօնեանցը Մեղու լրագրի մէջ, երբ ազգի մասին խօսում էր, թամամ էդ վախտին ենք հասել: Երբ Մոսկով էի գնում, մէկ մէկ անգամ էլ երբ Մարսէլ Չագար էի տանում, հազարներ էի տանուլ տալիս, հալա

պոօշտներ անելով էի կլուբներից դուրս
 գալիս, բայց մեր կլուբը որ կայ, ուրիշ
 թավուր մարդիկ է ստեղծել. սրանից տասը
 տարի առաջ մի տիրացու թէ վարժապետ
 կար, վանքումն էլ եկեղեցու խումբն էր
 երգեցնում, գիշերը ցերեկ էր շինել, հինգ
 անգամ լոթբազարութեան համար դուրս
 են արել, մէկ էլ տեսար գնաց էջմիածին,
 վարդապետ դառաւ և հանգուցեալ կաթո-
 ղիկոսի հետ քաղաք էր եկել. հիմի էլ նա
 առաջնորդ է ըտրուած ու թեմ է կառավա-
 րում... ոնց որ երևում է կարտօժնիկու-
 թիւնն ու վարդապետութիւնը քուրն ու
 աղբերն են. թէ որ մեր կլուբիցը էդպիսի
 մարդիկ են դուրս գալիս, այ գետինը դնեմ
 նրան, միթո՞ւմ ինչ դժուար բան է, որ
 էգուց մէկէլ որ կլուբի շփեյցարը բեղաբոս
 դառնայ... եթէ մեր կլուբում փող տանէք
 աւելի լաւ կանէք, որ յետ տաք տիրոջը,
 թէ չէ էնքան բայդուշութիւն կանեն, որ
 փողն էլ կածես ու հողն էլ և ոտով մինչև
 Շան թաղը կրփախչես... (մօտենում է դրան
 որ փակէ բայց ներս է մտնում Իվանը):

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԻՎԱՆ.—Добраго здравія Ваше благородіе.

ՊՕՂ.—(հասար.) Հայերը պրծան, հիմի

հերթը ուներին է հասել, հալբաթ վրացիք
 հալա սպասում են, յետոյ էլ կրգան էլի,
 թուրքը, քուրդը, եզդին, ջուլոն, այսօրը...
 հը շտօ խօչիշ:

ԻՎԱՆ.—Да ваше благородіе, прочель-сь
 въ газетахъ, что нашъ кумъ добрый Павгосъ
 скончался, жалко стало хорошаго человѣка,
 много добра сдѣлалъ онъ мнѣ и вотъ пришелъ
 предложить-сь свой катафалкъ.

ՊՕՂ.—(Պօղոս անհամբեր ետ ու առաջ անե-
 րով) Հիմի ի՞նչ անեմ, իմ հէրն ինձ ուի
 շկօլի ճամբան էլ կարգին չըսովրացրեց,
 հայերէնն էլ Մեղու, Մշակ, Նոր-դար Ար-
 ձագանք կարդալով սովորեցի. ես ո՞ր ջհան-
 դամից սրան պատասխանեմ. համա երևում
 է որ բալդախինչի է, շատ քելէիս ուտելուց
 քիթը ճարխալ է կտրել ու քուֆթա դառել.
 (Իվանին), Շտօ տի գավառիշ, շտօ բալդա-
 խին, շտօ բօղբաշ, շտօ կիրկաշ:

ԻՎԱՆ.—(բարձր)Такъ точно, Ваше благо-
 родіе, весь шелкомъ обуть, черный, съ ангелами,
 факела при нихъ будутъ-сь.

ՊՕՂ.—Բանը թակելուն չը հասնի թէ
 չէ էնքան հասցնեմ, որ համբել չկարողա-
 նաս:

ԻՎԱՆ.—Ваше благородіе, не понимаю по
 армянски.

ՊՕՂ. — Նի պանիմայիշ... վօտ եա գա-
վարու, շտօ եսլի մնօգօ սկաժիշ, տօ տէբէ
սավսեմ գդօխնու:

ԻՎԱՆ.—Боже сохрани васъ баринъ, за-
чѣмъ вамъ умирать, вы еще такимъ молодцомъ
выглядете.

ՊՕՂ.—(Ուզում է խօսել, բայց դժուարա-
նում է) Անիժածը հետս որ կարտ խաղալիս
լինէր էլի հա պատասխան կտայի, կասէի
своя, համա... վն շտօ խօշիս դա:

ԻՎԱՆ.—Наймите мой катафалкъ.

ՊՕՂ. — Վն, չարավէկ ժիվի, կատաֆալկա
նա շտօ դա:

ԻՎԱՆ.—Какъ же такъ-съ ваше благородіе,
я же не вру.

ՊՕՂ.—(զայրացած) Հիմա հանգիստ չեն
թողնի էլի, (վրայ է պրծնում Իվանի վրայ
ուզում է փայտով խփել, բայց Իվանը բռնում է
փայտից աշխատում են միմեանց ձեռքից խել
փայտը, երբ ներս է պրծնում կառապանը) վօտ
տէբէ, վօտ, վօտ կատաֆալկա, վօտ բալ-
դախին:

Տ Ե Ս Ի Լ Ժ Բ.

ԿԱՌԱՊԱՆ.—(աշխատելով բաժանել) Վն,
տօ, էյ, ինչիք անում էս ինչ խաբար է...

վա տօ է արաժդի դա, քիզ չիմ ասում տօ.
դուրակ, նէ սլիշիշ շտօլի, վա, վա, մէկացէք
է տօ, վա, վա (բաժանում է):

ԻՎԱՆ.— Я тебѣ покажу мерзавецъ какъ
битъ. (կառապանին) Господинъ, будьте
свидѣтелемъ. (զլխարկը մաքրելով դուրս է
գնում):

ՊՕՂ.—(քրիտիկաբար սրբելով) Իդի, իդի ար-
լարուդ դուռակ:

ԿԱՌ.—(Պօղոսին) էյ, սարսաղ, աղէդ
վուրտիդն է, գնա ասա վուր փայտօնի
փուղը տայ:

ՊՕՂ.— Այ ձեզ նոր բան. ինչ ֆայտօն
տօ, ինչ փող, ինչեր ես դուրս տալիս:

ԿԱՌ.— Վն, տօ էյ քիզ ասում իմ, գնա
աղիդ ասա, նա գիդի, մէ չէթվէրթ սահաթ
առաջ բերեցի:

ՊՕՂ.— Տօ, գիժ ես, ինչ է, էս տան
աղէն ես եմ:

ԿԱՌ.— է, վուր դուն իս հրամմէ երկու
արասի:

ՊՕՂ.—(բարձր) Տօ, դու ինձ երբ բերիր,
որ եկել ես փողն ես ուզում:

ԿԱՌ.—(բարկացած) Իս քի պէս սարսաղ-
ներին փայտոնս չիմ նստեցնում, քիզ ա-
սում եմ գնա աղիդ ասա, վուր փուղը տայ:

ՊՕՂ.—(բարկացած վազվզելով) էս անի-

նաճն ինձ համբերութիւնիցս հանում է,
էսպէս էլ պատիժ...

ԿՍՌ.— Է, տօ, չիս հասկանում (մտրակը
բարձրացնելով) էս կնուտին մէջքիդ կը ջար-
դեմ:

ՊՕՂ.— (մեղմացած) Աղբէր ջան, ի՞նչ ես
բարկանում, ասա աղէն, որին դու բերեցիր
ի՞նչ թաւուր մարդ է:

ԿՍՌ.— Աստուծ վունչ գիղի նրա
գլուխն ու արիվը, փարմասիօնի տէրտէրին
էր նման, վունչ բեխ ունէր, վունչ միրուք:

ՊՕՂ.— Էդ հօ էն աքտիօրն է եղել, աղ-
բէր ջան, ես նրան չեմ ճանաչում, էսօր
առաջին անգամ տեսայ:

ԿՍՌՍՊ.— Քիզ էլի ասում իմ վուր փա-
սաթուսէդ քաշես, գնաս ու աղիդ ասես,
վուր փուղս տայ, թէ չէ Աստուծ գիղե-
նայ... ըր... գնա թէ չէ էկաւ հա՛... (մտրա-
կը բարձրացնում է).

ՊՕՂ.— Աղբէր, թէ պարտ եմ էն ասա,
թէ չէ ինձնից ի՞նչ ես ուզում. էս տան
աղան ես եմ, Պօղոս աղա Միամիտով, եր-
բեմն պերվի գելղի կուպէց, հիմի ես էլ քեզ
պէս խեղճ մարդ եմ:

ԿՍՌ.— Վն, բա էն ով էր, վուր էկաւ:

ՊՕՂ.— Դերասան էր:

ԿՍՌ.— Ինչ է՞ր...

ՊՕՂՈՍ— Դերասան տօ, ջամբազ էլի:

ԿՍՌ.— Ինչի՞ր իս դուրս տալիս, ջամ-
բազները միրուք էլ ունին, բէխն էլ. նա
պաշօտնի մարդ էր. հագինը սերթուկ էր,
զլխին ցելինդը, ձեռքին մէ գլուխ չեշմակ-
ներ էր հաղացնում. հիմի ումն իս ուզում
խաբի տօ դուրումսաղ:

ՊՕՂ.— Արի ու սրան հասկացրու թէ
դերասանը որն է. (քիչ մտածում է) Տօ, դա
բաղորօղնի ջամբազ էր, թոկի վրայ չի
խաղում, բեմի վրայ է խաղում:

ԿՍՌ.— (հասար.) Սա վունց վուր վարա-
վուրդ իմ անում վունչինչ չի հասկանում,
(Պօղոսին) դէ, ան փողս, ան թէ չէ էկաւ
(այդ ըսպէին դրսից լսում է խուլ ձայն)
հը (այդ ըսպէին դրսից լսում է խուլ ձայն)
«ձիերը փախան, ձիերը փախան», (կռա-
պանը միքանի հատ հասցնում է ու դուրս գնում)
ըր... ձիւր մարդ ասողին ինչ ասիմ:

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ .

ՊՕՂՈՍ— (Շուարած դէպի հասարակութիւն)
Հօ տեսաք պարոնայք, շմոռանաք, ես ձեզ
բոլորիդ դատարան կը քաշ տամ իբրև վը-
կաներ: Ամեն բան չափ ու սահման ունի,
բայց հայկական այլանդակութիւնը ոչ եր-
բէք (հեռուից լսում է «ստարի աղօժ կա-
մու եստ պրօտաննչ» ձայնը): Մի ըսպէ են-

Թաղրենք, որ ես մեռել եմ, ուրեմն տունս
Սօջի բաղնիս պէտք է դառնայ: Չէ, չէ,
եղբայր, որ բոլորդ էլ ուրանաք իմ լաւ
մարդ լինելը, ես էգուցուանից Թուրքի
հաւատն եմ ընդունում: Հոգիս բերանիս
հասցրին անիծածները:

Հին ՇՈՐ ԳՆՈՂ.— (խօսակցութեան ժամա-
նակ ներս է մտնում մէկ թեի վրայ հին շորեր,
միւս ձեռքին ձիպոս բռնած). Այ տղայ, հէյվան
մեռելաշոր կունենաք ծախեցէք:

ՊՕՂ.— Հա՛, հէնց խաչագողներ էին պա-
կաս որ ինձ հայվան կանչէին:

Հին ՇՈՐ ԳՆՈՂ.— (հասար.) Տնազա անըմ
ինչ ա երկու իրեք օրից յետոյ էվելով ծա-
խի. (Պօղոսին) լաւ գին կտամ վախիլ մի,
գնա՛, ինչ կարաս մհէկ տուր, ինչ որ կըմնայ
մեր գուքանը կը բերես:

ՊՕՂ.— (հասար.) Հազիր... արի, հէնց իր
ոտով եկել է, ինչ որ հին մին բան կայ
ծախեմ. (շոր գնողին) ամեն բան կառնե՛ս:

Հին ՇՈՐ Գ.— Հա՛, կառնեմ, բեր տեսնեմ:

ՊՕՂ.— Մեր տունը մտնելիս դագաղը
տեսա՛ր:

Հին ՇՈՐ Գ.— Հա՛, տեսայ:

ՊՕՂ.— Ծախում եմ, ի՞նչ կտաս:

Պին ՇՈՐ Գ.— Դագաղն ինչ կանեմ, քու
աղին պառկեցրու որ չմըսի:

ՊՕՂ.— Այ տղայ, աղէս ասում է, որ



առանց աստառի էլ կարող է պառկել, դու
գնա աստառը պոկիր, ինչ կտաս:

Հին ՇՈՐ Գ.— Տօ՛, շոր բեր շոր, աստառն
ինչ կանեմ:

ՊՕՂ.— Ես հայա աստառն եմ ծախում,
իսկ յետոյ էլ ուրիշ շորերը:

Հին ՇՈՐ Գ.— Լաւ գնամ տեսամ (դուրս
է գնում):

Տ Ե Ս Ի Լ Փ Գ.

ԼՐԱՔԱՂ.— (Սրագ-արագ ներս է պրծնում
բլօկնօտը և մատիտը ձեռքին ուղակի Պօղոսին է
մօտենում) Բարի եղէք խնդրեմ հաղորդելու
ինձ Պօղոս Միամտեանի մահուան մանրա-
մասնութիւնները:

ՊՕՂ.— (հասար.) Թամամ սլէգօվատել է
անիծածը. (լրաքաղին) բայց, խնդրեմ ասա-
ցէք, ձեզ ինչ հարկաւոր են դրանք. դ՞ուք
էք մեր քաղաքամասի սլէգօվատէլը:

ԼՐԱՔԱՂ.— Ո՛չ, ես լրագրի համար եմ
ուզում:

ՊՕՂՈՍ— Լրագրի համա՛ւր... վերջապէս
ճանկս ընկար, այ հիմի լաւ կըգրես. գլխիս
էս խայտառակութիւնները դուք սարքե-
ցիք, Օհանէս շուտ արա՛, մեր տուն քան-
ցողը իր ոտով է մեր տուն եկել, (բռնում է
օձիքից). դագաղը բերէք մի սրան սաղ-սաղ
Թաղենք (կուռի ժամանակ վարագոյրը իջնում է):

ՀԱՅԿ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆԻ

Գրաւոր վաստակները.

	Գինը
	30 Կ.
1. Ձան գիւլում, 600 տուն	5 »
2. Խաչատուր Աբովեան	10 »
3. Միքայէլ Նալբանդեան	10 »
4. Ուրարդու և հայերի հայրենիքը	15 »
5. Նախապատմական կեանքը	20 »
6. Երգարան (Հ. Հայկազունի)	5 »
7. Շամիրամի ուլունքը	5 »
8. Երկու հէքիաթ	10 »
9. Այբբենարան	3 »
10. Գերեզմանատուն գնալը (թարգ.)	20 »
11. Դասագիրք էսպերանտո լեզուի բ. սպ.	50 »
12. Բառարան էսպերանտո-հայ.	2 »
13. Ֆերականութիւն էսպերանտո լեզուի	70 »
14. Բառարան հայ կենսագրութեանց ա. պրակ.	50 »
15. Հայոց պատմութիւն (դասագիրք) գ. սպ.	1 ր. 25 »
16. Հայոց պատմութիւն, ընդարձակ	50 »
17. Հայ վաճառականութիւնը Ռուսիայում	15 »
18. Ճանկըս ընկար, վօդ.	

Հրատարակութիւններ

1. Ձեռնարկ կար ու ձևի (Շ. Եւանգուլ.)	70 կոպ.
2. Կառապան Սմիգ, էսքիզ Ա. Պայազատի	2 »
3. Լիլիտի աղջիկը. Բարոյականութիւն. Ա. Ֆրանսի	10 »
4. Brulego en petrolfabriko (Շիրվանզադէ)	5 »
5. Ordono (Նինօզլիլի)	3 »

6. Gogja Uisvili (»)	5 »
7. Gastejo (Գի դը Մօզասան)	5 »
8. La fela standardo (Վ. Սարգսեանի)	3 »
9. Ruĝa ĉapeto. Kato en botoj Վ. Սիրունեանի	3 »
10 La mateno de aferisto	3 »
11 Ŝagaj kokoj (Վ. Փափազեան)	3 »
12 Աղգայիւն Սահմանադրութիւն	15 »

Հ ր ա գ ի ը ն ե ը

1. Դիտակ շարաթաթերթ 1—12	1 ը.
2. Խարաղան » 1—26	չկայ
3. Արփի » 1913 թ. 1—51	2 ը. 50
4. Kaŭkaza Esperantisto, 1908—1910	5 ը.

Դիմել՝ Тифлисъ, Николаевская ул. № 3
Айку Теръ-Аствацатрянцу

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

« Ազգային գրադարան



NL0372060

58178

